ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/133

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16516-18 գրությամբ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 11.09.2018թ. թիվ 02/3019-18 գրության հիման վրա, 13.09.2018թ. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Ջրային կոմիտեի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ջրային կոմիտեն 11.09.2018թ. թիվ 02/3019-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ջրային կոմիտեի կարիքների համար 08.08.2018թ. կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընթացքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ ի հայտ եկած հիմքերի վերաբերյալ ներկայացնում եմ համապատասխան տեղեկություն:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.08.2018թ. N 2 որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5, 5.1 և 5.2): 20.08.2018թ. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված փաստաթղթերը, չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև 20.08.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված համապատասխան տեղեկության համաձայն «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. N 4 որոշմամբ՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունների, ինչպես նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների հիմքերով:»:

Ջրային կոմիտեն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն համայնքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն 24.09.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 13.08.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից 20.08.2018թ. սահմանված կարգով ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ քննարկման ընթացքում նշվեց, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 1-ին 2-րդ չափաբաժինների համար ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով

ներկայացված պահանջներին: Մասնավորապես, արձանագրվել են անհամապատասխանություններ որպես համանման ներկայացրած պայմանագրի, աշխատանքային ռեսուրսը և տեխնիկական միջոցի հիմնավորող փաստաթղթերի մասերով:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 20.08.2018թ. ստացվել է համապատասխան տեղեկատվությունը՝ համաձայն որի «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 51000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով մրցույթի 1-ի և 2-րդ չափաբաժինների համար «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար, առաջարկել ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների հիմքերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Սակայն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն 13.08.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 51.000 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերհսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի մոտ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա 51.000 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորությունը՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով է:

Գտնում ենք, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման շրջանակում այս մասով չի խախտել ստանձնած պարտավորություն հետևյալ հիմնավորմամաբ:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն, երբ Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում բացահայտվել է, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), պարզվել է (ՀՀ ԿԱ ՊԵԿ թեժ գծին կատարած զանգից), որ ս.թ. հուլիսին վերսհկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերհսկվող եկամուտների գծով

առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարվել է որպես վերսհկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, մեր կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն 13.08.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերսհկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց

նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի համակարգին, օրենսգրքի 7-րդ հոդվածում սպառիչ թվարկել է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները, որոնց շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշների վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Բացի այդ, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը վճարվում է Հիմնադրամ, մինչդեռ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները պետք է վճարվեն ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ:

Այս դիրքորոշմանն է մեծապես նպաստել նաև այն հանգամանքը, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 24.08.2018թ., կատարել է 23.08.2018թ. ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանության շտկումը «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանող gevorgyan.nersisyan@mail.ru էլեկտրոնային հասցեից Ջրային կոմիտեի կողմից կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի քարտուղարի finansakan2013@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկելով պահանջված փաստաթուղթը:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, սակայն անհասկանալի պատճառներով՝ գնահատող հանձնաժողովը, արձանագրել է, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել:

Ինչպես արդեն նշվել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.08.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ միաժամանակ արձանագրել է «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի մասնակցության հետ կապված երկու խնդիր՝ նախ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայություն, և երկրորդ՝ անհամապատասխանություններ որպես համանման ներկայացրած պայմանագրի, աշխատանքային ռեսուրսը և տեխնիկական միջոցը հիմնավորող փաստաթղթերի մասերով:

Այնուամենայնիվ, արձանագրելով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայությունը, գնահատող հանձնաժողովը տվել է շտկելու հնարավորություն միայն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (համանման պայմանագիր, աշխատանքային ռեսուրս և տեխնիկական միջոց) մասով, չտալով շտկելու հնարավորություն վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասով: Մինչդեռ ակնհայտ է, որ վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայության պայմաններում մասնակցի հայտը ընդհանրապես չի կարող գնահատվել բավարար՝ Կարգի 44-րդ կետի ուժով, այն տվյալ պահին ենթակա էր մերժման, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին ներկայացված պահանջը՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, ոչ իրավաչափ է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2018/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16516-18 գրությունը, Ջրային կոմիտեի 11.09.2018թ. թիվ 02/3019-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 15.08.2018թ. կայացած նիստի թիվ 2, 22.08.2018թ. կայացած նիստի թիվ 3 և 28.08.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի 24.09.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, 13.08.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրված եզրակացությունը.

Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզում թվով 7 խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:
- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 15.08.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝ 4-րդ կետի.

- 1-ին ենթակետով որոշել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին:

- 3-րդ ենթակետով որոշել է առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 5, Հավելված 5.1 և Հավելված 5.2):

- 4-րդ ենթակետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 51.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 22.08.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2-րդ կետով արձանագրել է, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից Հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերով ներկայացված պահանջներին, մասնավորապես՝

1. հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա տնթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար ներկայացված

պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ, քանի որ ներկայացված պայմանագրի առարկան ««Մուսա լեռ հուշահամալիրի ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքներ են», որը չի համապատասխանում վերը նշված հրավերի պահանջներին:

2. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 5.2 առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կատարված աշխատանքների մասին տեղեկությունը:

3. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցներից՝ Հորատող մեքենա՝ ՄՏԶ 82 տրակտորի բազայի վրա տեղադրված հորատման հաստոցը չի համապատասխանում մրցույթում ներկայացված հորատման հաստոցի տեխնիկական պայմաններին: ՄՏԶ 82 տրակտորի բազայի վրա տեղադրված շնեկային հորատման սարքավորումները նախատեսված են միայն մինչև 4մ. խորությամբ հորատանցնքեր հորատելու համար և ներկայացված УКС-22М1 հարվածաճոպանային հորատման հաստոցը ևս չի համապատասխանում մրցույթում ներկայացված հորատման հաստոցի տեխնիկական պայմաններին:

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է առաջարկել «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 28.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության՝

- 2-րդ կետով արձանագրել է, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից 22.08.2018թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

- 3-րդ կետով որոշել է «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն

բացահայտելով, որ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն, գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե և պարզել, որ առկա 51.000 ՀՀ դրամ պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով, սակայն այն հանգամանքը, որ դրոշմանիշների վճարը վերհսկվող եկամուտների գծով առանձին վճարման ենթակա պարտավորություն է, որևէ տեղ արտացոլված չէ: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներակայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի և միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ:

Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 24.08.2018թ., կատարել է 23.08.2018թ. ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանության շտկումը և Ընկերությանը պատկանող՝ gevorgyan.nersisyan@mail.ru էլեկտրոնային հասցեից՝ Ջրային կոմիտեի կողմից կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի քարտուղարի finansakan2013@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկել՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը: Ընկերության ներկայացուցիչը համակարգչի միջոցով բացեց gevorgyan.nersisyan@mail.ru էլեկտրոնային հասցեն և որպես ապացույց Բողոքներ քննող անձին ցույց տվեց, որ 24.08.2018թ. պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերի շտկված տարբերակը ուղարկել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի քարտուղարի finansakan2013@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 13.08.2018թ. դրությամբ քաղվածքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև Պատվիրատուին՝ 24.08.2018թ. finansakan2013@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղղարկված նամակների կարճապատկերումները (screenshots):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային

երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների

հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզում թվով 7 խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից

ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

- 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում

իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.08.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (13.08.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 51.000 ՀՀ դրամ:

- «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (13.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

- «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 24.08.2018թ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը՝ Ընթացակարգի քարտուղարի՝ finansakan2013@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը՝ կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պարտավորությունները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16516-18 գրությամբ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ